Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական

միջազգային կենտրոնի տնօրեն

Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Շրջանավարտների հետ կապերի և զբաղվածության բաժին

Հաշվետվություն

2017թ

- Բաժնի , ԳԿՄԿ ՈՒԽ-ի և ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի համատեղ ջանքերով 2017թ. հուլիսի 17-21-ը ներառյալ «Շող» ցերեկային կենտրոնում կազմակերպվեց մեկշաբաթյա կրթական ծրագիր կենտրոնի սաների համար, որին Գիտակրթական միջազգային կենտրոնից մասնակցում էին իրավագիտության, հոգեբանության, ինֆորմատիկայի, քաղաքագիտության, արևելագիտության, սոցմանկավարժության, միջազգային հարաբերությունների, դեղագիտության կուրսերի ուսանողներ՝ ինչպես նաև Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի և Պատմության ինստիտուտների գիտաշխատողներ: Կենտրոնի կողմից ուսանողներին վերջում հանձնվեցին համապատասխան հավաստագրեր:
- Բաժնի կողմից պարբերաբար և շարունակաբար իրականացվում է ավարտական կուրսերի ուսանողների զբաղվածության տվյալների հավաքագրման և թվայնացման աշխատանքներ:

- Սեպտեմբերի 20-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կազմակերպվել է 2015-2017թթ. ուս տարվա առկա կուրսերի դիպլոմների հանդիսավոր հանձնման արարողությունը:
- Նախապատրաստական աշխատանքներ ենք իրականացրել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի հիմնադրման 20-ամյակին նվիրված գիտաժողովի կազմակերպման ուղղությամբ:

Ամրապնդելով հանրային կապերը՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Շրջանավարտների հետ կապերի և զբաղվածության բաժինը պարբերաբար կազմակերպում է կենտրոնի աշխատակիցների մասնակցությունը տարբեր հեռուստատեսային հաղորդումներին, կազմակերպում է Կենտրոնի միջոցառումների և աշխատանքների լուսաբանումը տարբեր ԶԼՄ-ներով:

Ս.թ. հոկտեմբերի 9-ին Գիտակրթական միջազգային կենտրոնի շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ առաջին կուրսերի ուսանողների հետ հանդիպում, որի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում իրականացվող միջոցառումներին և շրջանավարտների զբաղվածության և կարիերայի բաժնի գործունեությանը: Հանդիպման ժամանակ ներկաներին տրվեցին հարցաթերթիկներ որոնք մշակվել էին նախապես ԳԿՄԿ ուսանող ՊԴ կազմ հարաբերվելու մեխանիզմներն մշակելու նպատակով:

- 2017թ. հոկտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի ուսանողները մասնակցեցին Ճգնաժամային կառավարման ակադեմիայի ՈՒԳԸ-ի կազմակերպած «Աղետների հոգեբանությունը» թեմայով միջբուհական գիտաժողովին:
- Հոկտեմբերին բաժնի կողմից իրականցվեց մեկամսյա ամբողջական ծրագիր ‹‹ Կարիերայի կառուցման հմտությունները թեմայով››, որի ընթացքում նախապես ընտրված ԳԿՄԿ մագիստրանտները ծանոթացան կարիերա կառուցեելու մեխանիզմներին, գործատուին ներկայանալու ձևերին, հաղորդակցման հմտություններին, գրագետ ինքնակենսարգրական CV և վիդեո CV կազմելու գործիքներին: Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում հյուրընկալվեց «Արմենպրես» լրատվական գործակալության տնօրեն Արամ Անանյանը, ‹‹Էթիկայի›› դպրոցի տնօրեն Գևորգ Մկրտչյանը, ‹‹2minds›› միջազգային ընկերության տնօրեն Մարիամ Համբարձումյանը:
- «Դասավանադի՝ր Հայաստան» հիմնադրամի հետ կնքվեց փոխհամագործակցության պայմանագիր: Կենտրոնի ավարտական կուրսերի համար կազմակերպվեցին դասընթացներ, ուսանողները ծանոթացան հիմնադրամի գործունեությունը Հայաստանում, ծրագրին դիմելու և աշխատելու պայմաններին:
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների և շրջանավարտների համար կազմակերպվեց «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության ներկյացուցիչների հետ հանդիպում: Ընկերության ներկայացուցիչները շրջանավարտներին ներկայացիրն «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության թափուր հաստիքները:
- 2017թ. դեկտեմբերի 22-ին ԳԿՄԿ Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի, ԳԿՄԿ ՈՒԽ-ի, ինչպես նաև Մանկավարժական համալսարանի ՈՒԳԸ

նախագահ Վարդ Կարապետյանի համատեղ ջանքերով «Շող» ցերեկային կենտրոնի սաների համար կազմակերպվեց ամանորյա միջոցառում:

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնտեսագիտության լաբորատորիայի և շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի համատեղ ուժերով 2017թ. նոյեմբերի 15-28 ներառյալ կազմակերպվեց «Ժամանակակից բիզնես. Մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով դասընթացներ:
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի և ՈւԽ-ի ջանքերով՝ արդեն ավանդույթ դարձած կերպով, իրականացվեց ամենամյա բարեգործական ծրագիրը , որն այս տարի այցելեց ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղեր:

- 2017 ուսումնական տարում փոխհամագործակցության պայմանագրեր են ձեռք բերվել ՀՀ խոշորագույն 5 գործատուների հետ:

Բաժնի կողմից պարբերաբար պատրաստվում և լուսաբանվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տարբեր միջոցառումների մասին նյութեր հաղորդումներ, մշտապես կապ է պահպանվում ՀՀ ԶԼՄ ներկայացուցիչների հետ:

Հաշվետու տարում բաժնի կողմից պատրաստվել է ընդհանուր թվով 18 տեղեկատվական նյութ, 11 հայտարարություն, 3 տեսանյութ , որոնք տեղադրվել են Կենտրոնի պաշտոնական կայքում:

Մշտապես սոցիալական ցանցերով թարմացվում և լուսաբանվում է նախատեսվող միջոցառումների մասին տեղեկատվություն և ամփոփվում նաև արդյունքները:

Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի պետ՝ Ա. Շահազիզյան